

Սաղմոս 37:5 (Psalm 37:5)

«Յարատել»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 05.12.02

James Tillis կոփամարտիկ մըն էր (boxer), Tulsa, Oklahomայէն: Chicago կը խաղար՝ 1980 թըվականներուն: Tillis կը յիշէ այդ օրը որ հասաւ Chicago: Ան կը պատմէ այսպէս, «*Busէն իջայ 2 հատ խաւաքարտէ պայուսակ թելերուս տակ, Chicagoյի կեդրոնը եւ կանգ առի Sears Tower շէնքին առջեւ: Պայուսակներս գետին դրի, եւ վեր աշտարակին նայելով ըսի «ես պիտի գրաւեմ Chicagoն»: Երբ վար նայեցայ, ահա պայուսակներս անհետացած էին»:*

Շատ դիրուն է յուսահատիլ: Եթէ ըսեմ հիմա՝ ան որ յուսահատ եղած է թող ձեռքը վերցնէ՝ - մի՛ վախնաք, պիտի չհարցնեմ: Սակայն, շատ լաւ գիտեմ որ բոլորս ալ յուսահատելու փորձառութիւնը ունեցած ենք: Ունի՞մք անձեր որ կ'աղօթեն եւ աղօթած են երկարատեւ ընտանիքին մէկ անդամին համար, կամ հիւանդութեան համար, կեանքիդ մէկ պարագային համար, առաջնորդութեան համար - աղօթք եւ ինդրանք՝ կազդուրման եւ բժշկութեան համար - սպասելով Աստուծոյ պատասխանին:

Այս առաւօտ կուզեմ ձեզ քաջալերել - մանաւանդ մայրերը - Դաւիթի գրած այս սաղմոսով՝ 37:5 «*Տէրոջը յանձնէ բու նամբադ ու Անոր յուսա եւ Անիկա պիտի կատարէ»:*

'Յանձնել' կը նշանակէ քալել առանց փոփոխութեան: 'Յուսալ' կը նշանակէ լման Աստուծոյ վստահիլ: Կրնանք մենք զմեզ Աստուծոյ յանձնել եւ նաեւ անոր վստահիլ եւ Աստուած պիտի կատարէ մեր պետքը:

Henry Dempsey, օդաչուն կը թռչէր Portland, Maineէն դէպի Boston, Massachusetts յանկարծ տարօրինակ ձայն մը լսեց օդանաւին ետեւէն: Մինչ միւս օդաչուն կը բշէր օդանաւը, ինք ետեւը գնաց քննելու ձայնին պատճառը:

Երբ հասաւ ետեւը, յանկարծ օդանաւը մէկ կողմ ծոնցաւ եւ Dempsey զարնուեցաւ կողմի դռան, որը տեղէն շարժած էր: Մինչ այս՝ դուրը բացուեցաւ եւ Dempsey դուրս ինկաւ:

Միւս օդաչուն տեսաւ կարմիր լոյսը, գիտցաւ որ դուռ մը բաց է եւ թէ Dempsey դուրս ինկած էր, խնդրեց էն մօտ օդակայանէն որ օդանաւը վար բերէ:

Երբ օդանաւը ապահով կերպով հասաւ մօտակայ օդակայանը, տեսան որ Henry Dempsey ողջ էր եւ բռնած էր օդանաւին աստիճանը: 4000 ոտք բարձր եւ 200 մղոն ժամը արագութեամբ թռած էր օդանաւը: Երբ հասան, Dempsey կրցած էր գլուխը 12 inches վեր բռնել որ գետին չփուխ: Մի քանի վայրկեան առաւ մինչ կրցին Dempseyին մատերը ֆակել աստիճանէն:

Նոյնպէս մենք ալ պէտք է յենինք Աստուծոյ, ինչ որ ալ ըլլայ պարագան, որ չ'ըլլայ որ գատուինք մեր հաւատքէն, կամ մեր փրկութենէն:

Աստուած լսած է մեր առաջանքը: Աստուած կը պատասխանէ: Աստուծոյ ծրագիրը եւ նպատակը բոլոր պատմութեան ընթացքին սա է՝ որ մարդիկ ապաշխարեն եւ Աստուծոյ դառնան: Միայն Աստուած է որ գիտէ մեր սրտերը եւ մեր սիրելիներուն սրտերը եւ Ան գիտէ թէ ինչպէս պիտի գործէ սրտերէն ներս, նաեւ գիտէ թէ որչափ ժամանակ պիտի առնէ այս գործը: Անոր գործը յաւիտեանական փոփոխութիւն է որ շատ վեր է մեր մտահոգ խորհուրդներէն: Կարելի անմիջական արդիւնք չենք տեսներ, բայց Աստուած կը գործէ: Ան մեզմէ կակնկալէ որ լիովին Իրեն վստահինք:

Վերջին խորհուրդը որ կուզեմ բաժնեկցիլ սիրելի մայրերուն հետ: Հետեւեալ առակն է. *«Մանուկ մը առանց մօր, կը նմանի դուռի մը որ բռնիչ չունի»:*

Այսօր Ու՞ր պիտի ըլլայինք առանց մայրերու: Ոեւէ մէկս հոս պիտի չըլլայինք առանց մայրերու: Որքա՛ն էական է մայրերու դերը մեր կեանքին մէջ: Մեզ կը կրեն իրենց մարմնին մէջ, մեզի ծնունդ կուտան եւ կը խնամեն աննման սիրով:

George Campbell Morgan - անուանի ֆարոգիչ մըն էր - եւ ունէր 4 մանչ - բոլորն ալ եղան ֆարոգիչ: Howard իր մանչերէն մեկն էր անոր հարցուցին *«Ո՞վ էն կարող ֆարոգիչն է քու ընտանիքիդ մէջ, ան նայելով հօրը պատասխանեց 'մայրս'»:*

Մայրեր, այս առաւօտ կը ֆաջալերեմ՝ ձեզ յիշելով Դաւիթի իրատը՝
յանձնուիլ եւ վստահիլ Աստուծոյ: Մայրեր, մեծ մայրեր, ծնողներ,
ազգականներ, յարատեւ եղէ՛ք ձեր գաւակներուն կրթութեան մէջ:
Զեր ազդեցութիւնը իսկապէս զօրաւոր է ձեր գաւակներուն վրայ:
Շարունակեցէ՛ք աղօթել, վստահիլ Աստուծոյ: Աստուած որ
արդար եւ սիրող է՝ կը լսէ: Աստուած կը սիրէ ձեր գաւակները եւ
կը ներգործէ անոնց սրտերուն մէջ: